

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի
<<Ֆարմացիա>> մասնագիտության <<Ֆարմացիա>>
մագիստրոսական կրթական ծրագրի ընդունելության հարցաշար
2021-2022 ուստարի

«Բնական միացությունների քիմիա» և «Կենսատեխնոլոգիա»

1. Ամինաթթուներ, կառուցվածքը, անվանակարգությունն ու ֆիզիկաքիմիական հատկությունները:
2. Ամինաթթուների ստերեոքիմիան, համեմատական և բացարձակ կոնֆիգուրացիա:
3. Ամինաթթուների ստացման խառը քիմիաէնզիմատիկ եղանակը L-Met-ի օրինակով:
4. Ամինաթթուների սահմետրիկ սինթեզ:
5. Ամինաթթուների անալիզի (նրբաշերտ, ԳՀՔ, ԲԱՀՔ) մեթոդները:
6. Պեպտիդներ, պեպտիդային կապ: α -NH₂, α -COOH խմբերի պաշտպանման մեթոդներ:
7. Ինսուլին, գլյուկագոն և օբսիտոցին պեպտիդների կենսաբանական ֆունկցիաները:
8. Պեպտիդային բնույթի հակաբիոտիկներ (գրամիցիդին C, տիրացիդին A, տիրացիդին B):
9. Սպիտակուցների տարածական կառուցվածքը՝ առաջնային, երկրորդային, երրորդային և չորրորդային կառուցվածքներ:
10. Սպիտակուցների առաջնային կառուցվածքի որոշման էտապները: Թթվային և հիմնային հիդրոլիզ:
11. Ֆերմենտների դասակարգումը, կառուցվածքը և ակտիվության արտահայտման միավորները:
12. Ֆերմենտների ակտիվ կենտրոնի կառուցվածքի Դիքսոնի մոդելը, դենատուրացիա:
13. Ֆերմենտային ռեակցիայի արագության կախվածությունը ջերմաստիճանից, և միջավայրի pH-ից:
14. Կենսատեխնոլոգիական պրոցեսները և նրանց տեսակները՝ ստերիլ և ոչ ստերիլ, ալերոբ և անալերոբ, պարբերական, կիսաանընդհատ և անընդհատ:
15. Ինժեներային էնզիմալոգիայի խնդիրները: Ֆերմենտների անջատման մեթոդները:
16. Ամինաթթուների կենսատեխնոլոգիական արտադրությունը:

«Դեղերի արտադրական տեխնոլոգիա»

17. Փոշիներ, պատրաստման առանձնահատկությունները (բացատրել դեղատոմսի օրինակով՝ ցուցակահսկվող նյութերի միանվագ և օրական դեղաչափերի հաշվարկ, պատրաստման առանձնահատկությունները):
18. Բարդ փոշիներ, պատրաստման տեխնոլոգիան (բացատրել դեղատոմսի օրինակով՝ ցուցակահսկվող նյութերի միանվագ և օրական դեղաչափերի հաշվարկ, պատրաստման առանձնահատկությունները):
19. Իրական ջրային լուծույթների պատրաստման դեղատոմս (բացատրել դեղատոմսի օրինակով՝ միանվագ և օրական դեղաչափի հաշվարկ, առանձնահատկությունները):
20. Կախույթների պատրաստում խիստ հիդրոֆոբ նյութերով (բացատրել դեղատոմսի օրինակով՝ միանվագ և օրական դեղաչափի հաշվարկ, առանձնահատկությունները):
21. ԲՄՄ լուծույթներ, պատրաստման առանձնահատկությունները (բացատրել դեղատոմսի օրինակով):
22. Ջրաթուրմեր, պատրաստման դեղատնային տեխնոլոգիան (բացատրել դեղատոմսի օրնակով դեղաչափերի հաշվարկ, V_2 և այլ առանձնահատկություններ):
23. Ջրային հանուկներ, (միքստուրա) պատրաստման դեղատնային տեխնոլոգիան (դեղաչափերի հաշվարկ, V_2 և այլ առանձնահատկություններ):
24. Լորձեր, պատրաստման դեղատնային տեխնոլոգիան (ըստ դեղատոմսի, դեղաչափերի հաշվարկ, V_8 և առանձնահատկությունները):
25. Քսուլքներ, պատրաստման դեղատնային տեխնոլոգիան (ըստ դեղատոմսի, առանձնահատկությունները, պատրաստման տեխնոլոգիան):
26. Մածուկներ, պատրաստման դեղատնային տեխնոլոգիան (ըստ՝ դեղատոմսի, առանձնահատկությունները, պատրաստման տեխնոլոգիան):
27. Դեղամոմիկի պատրաստման դեղատոմս (դեղաչափերի հաշվարկ, հիմքի քանակի հաշվարկ, առանձնահատկությունները):
28. Դեղամոմիկի (գնդիկի կամ պեսարիայի) պատրաստման դեղատոմս (դեղաչափերի հաշվարկ, հիմքի քանակի հաշվարկ, առանձնահատկությունները):
29. Գալենային պրեպարատներ, հանուկների ստացման տեսական հիմունքները:
30. Մացերացիա և պերկոլյացիա, տեխնոլոգիական առանձնահատկությունները:
31. Էքստրակտներ, դասակարգումը: Հեղուկ էքստրակտներ, ստացման ռեպերկոլյա-ցիոնեղանակի տեխնոլոգիական սխեման:
32. Թանձր և չոր էքստրակտներ, ստացման մեթոդները:
33. Նորհալենային պրեպարատների տեսակները: Հանուկների մաքրման մեթոդները:
34. Դեղաձևերի դասակարգման համակարգը: Դեղերի կենսաբանական մատչելիություն, դեղանյութերի համակցման անհամատեղելիության տեսակները:

35. Դեղահատերը որպես դեղաձևեր, դասակարգումն ու դեղահատավորման տեսական հիմունքները:
36. Դեղահատավորման օժանդակ նյութեր և լցանյութեր: Դրանց տեսակներն ու ֆունկցիաները:
37. Դրաժե, միկրոդրաժե, սպանսուլաների ստացումը:
38. Ներարկված դեղաձևերի գործարանային արտադրությունը (լուծույթների պատրաստում, որակի հսկում, ոչ պիտանի ամպուլաների լուծույթի ռեգեներացում):

«Դեղագիտական քիմիա(անալիզ)»

39. Անօրգանական դեղանյութերի իսկության հաստատման քիմիական եղանակները կատիոնների և անիոնների նստեցման ռեակցիաներով:
40. Դեղանյութերի քանակական որոշման թթվա-հիմնային տիտրման եղանակը: Որպես օրինակ ներկայացնել նոսր քլորաջրածնական թթվի քանակական որոշման սխեման, գրել համապատասխան ռեակցիաների հավասարումները, նշել ինդիկատորը և հաշվել քլորաջրածնի պարունակությունը լուծույթում, համապատասխան տվյալների համաձայն:
41. Դեղանյութերի քանակական որոշման վեր-օքս տիտրման եղանակը: Որպես օրինակ ներկայացնել կալիումի պերմանգանատի քանակական որոշման սխեման, գրել համապատասխան ռեակցիաների հավասարումները, նշել ինդիկատորը և հաշվել կալիումի պերմանգանատի պարունակությունը պրեպարատում, համապատասխան տվյալների համաձայն:
42. Դեղանյութերի քանակական որոշման կոմպլեքսոնոմետրիկ տիտրման եղանակը: Որպես օրինակ ներկայացնել կալցիումի քլորիդի քանակական որոշման սխեման, գրել համապատասխան ռեակցիաների հավասարումները, նշել ինդիկատորը և հաշվել կալցիումի քլորիդի պարունակությունը պրեպարատում, համապատասխան տվյալների համաձայն:
43. Սահմանայինն ոչ սահմանային ածխաջրածինների դեղապրեպարատներ: Քլորէթիլ, հալոտան, յոդոֆորմ. իսկության հաստատումը, քանակական որոշումը:
44. Միատոմ, բազմատոմ սպիրտների դեղապրեպարատներ: Էթանոլ և գլիցերին. իսկության հաստատումը, քանակական որոշումը:
45. Ալդեհիդներ և դրանց ածանցյալների դեղապրեպարատներ: Ֆորմալդեհիդ և հեքսամեթիլենտետրամին. իսկության հաստատումը, քանակական որոշումը:

«Դեղաբանություն»

46. Տեղային անզգայացնող դեղերի (տեղային անեսթետիկների) դեղաբանական բնութագիրը:
47. M և N-խոլինոխթանիչների (M և N-խոլինիմիմետիկների) դեղաբանական բնութագիրը:
48. α, β -ադրենոխթանիչների (α, β -ադրենոմիմետիկների) դեղաբանական բնութագիրը:
49. α, β -ադրենոպաշարիչների դեղաբանական բնութագիրը:
50. Ընդհանուր անզգայացնող դեղեր. շնչառական և ոչ շնչառական անզգայացնող դեղերի դեղաբանական բնութագիրը:
51. Քնաբեր դեղերի դեղաբանական բնութագիրը:
52. Նեյրոլեպտիկների դեղաբանական բնութագիրը:
53. Հակատագնապային դեղերի (անքսիոլիտիկների կամ տրանկվիլիզատորների) դեղաբանական բնութագիրը:
54. Հակադեպրեսանտների դեղաբանական բնութագիրը:
55. Հակաեպիլեպսային (հակացնցումային) և հակապարկինսոնյան դեղերի դեղաբանական բնութագիրը:
56. Ոչ թմրաբեր ցավազրկողների և հակատենդային, ոչ ստերոիդային հակաբորբոքա-յին դեղերի դեղաբանական բնութագիրը:
57. Կարդիոտոնիկ դեղերի դեղաբանական բնութագիրը:
58. Հակաառիթմային դեղերի դեղաբանական բնութագիրը:
59. Հակագերճնշումային դեղերի (հակահիպերտենզիվ կամ հիպոտենզիվ դեղերի) դեղաբանական բնութագիրը:
60. Հակաանզինալ (հակահեղձուկային) դեղերի դեղաբանական բնութագիրը:
61. Միզամուղ դեղերի դեղաբանական բնութագիրը:
62. Պենիցիլինի և ցեֆալոսպորինների շարքի հակաբիոտիկների դեղաբանական բնութագիրը:
63. Ամինոգլիկոզիդային, տետրացիկլինի, մակրոլիդային, լևոմիցետինի շարքի հակաբիոտիկների դեղաբանական բնութագիրը:
64. Սուլֆանիլամիդների դեղաբանական բնութագիրը:

«Դեղագործության կազմակերպում և էկոնոմիկա»

65. Դեղագործական համակարգ, դրա կառուցվածքը:
66. Հանրային դեղատուն, դրա հիմնական խնդիրն ու գործառույթները:
67. Դեղագետի դերը ինքնաբուժման կառավարման գործընթացում:
68. Դեղագործական գործունեություն: Գործունեություններ, որոնք իրականացվում են միայն դեղագետների և դեղագործների կողմից:
69. Դեղի՝ որպես յուրահատուկ սպառողական ապրանքի առանձնահատկությունները:
70. Դեղերի անվանումները :

«Ախտաբանական ֆիզիոլոգիա»

71. Բորբոքում, բնորոշումը, պատճառները, զարգացման փուլերը:
72. Ալերգիա, զարգացման փուլերը, տեսակները:
73. Չարկերակային և երակային գերարյունություն (հիպերեմիա), առաջացման պատճառները, հետևանքները:
74. Թրոմբոզ, էմբոլիա, ստագ, առաջացման պատճառները, հետևանքները:
75. Հիպոքսիա հասկացությունը: Հիպոքսիայի դասակարգումը:
76. Թթվահիմնային հավասարակշռության խանգարման տեսակները:
77. Ընդհանուր հարմարողական (ադապտացիոն) համախտանիշ:
78. Կլինիկական և կենսաբանական մահ:

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն՝



Ա.Ս. Սադյան

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի
<<Ֆարմացիա>> մասնագիտության <<Դեղերի որակի վերահսկում>>
մագիստրոսական կրթական ծրագրի ընդունելության հարցաշար
2021-2022 ուստարի

«Դեղագիտական քիմիա(անալիզ)»

1. Դեղերի որակի վերահսկումը քիմիա-դեղագործական ձեռնարկություններում, վերահսկող-անալիտիկական լաբորատորիաներում և դեղատներում:
2. Դեղագործական անալիզի յուրահատկություններն ու հիմնական չափանիշները:
3. Դեղանյութերի իսկության հաստատման /ճանաչման/ ընդհանուր սկզբունքները:
4. Անօրգանական դեղանյութերի իսկության հաստատման քիմիական եղանակները կատիոնների և անիոնների նստեցման ռեակցիաներով:
5. Դեղանյութերի անորակության պատճառները և որակի փորձարկման ընդհանուր պահանջները:
6. Անօրգանական իոնների խառնուկների առկայության ընդհանուր փորձարկումները դեղանյութերում:
7. Խոնավության և pH- ի որոշումը դեղանյութերում:
8. Դեղանյութերի քանակական որոշման թթվա-հիմնային տիտրման եղանակը:
9. Դեղանյութերի քանակական որոշման վեր-օքս տիտրման եղանակը:
10. Դեղանյութերի քանակական որոշման կոմպլեքսոնոմետրիկ տիտրման եղանակը:
11. Օրգանական դեղանյութերի դասակարգման սկզբունքները:
12. Նյութի քիմիական կառուցվածքի և կենսաբանական ակտիվության կապը
13. Օրգանական բնույթի դեղանյութերի անալիզի եղանակներ, առանձնահատկությունները:
14. Սահմանային և ոչ սահմանային ածխաջրածինների դեղապրեպարատներ:
15. Միատոմ, բազմատոմ սպիրտների դեղապրեպարատներ:
16. Ալդեհիդներ և դրանց ածանցյալների դեղապրեպարատներ:
17. Կարբոնաթթուների և դրանց աղերի դեղապատրաստուկներ:
18. Եթերների դեղապատրաստուկներ:
19. Էսթերների դեղապատրաստուկներ:
20. Ամինաթթվային դեղապատրաստուկներ:
21. Ածխաջրային դեղապատրաստուկներ:

«Դեղերի որակի հսկման գործիքային անալիզի եղանակներ»

22. Դեղաքրզերում դեղերի որակի հսկման համար գործիքային վերլուծական մեթոդները և սկզբունքները:
23. Ինֆրակարմիր, տեսանելի և ուլտրամանուշակագույն սպեկտրաչափեր:

24. Հեղուկային և գազ հեղուկային քրոմատոգրաֆիական անալիզի մեթոդներ:
25. ՄՄՌ սպեկտրաչափական անալիզի սկզբունքները:
26. Մասս-քրոմատոգրաֆիական անալիզի սկզբունքները:
27. Քանակական և որակական նույնականացման գործիքային վերլուծական մեթոդները և սկզբունքները:
28. Օպտիկական անալիզի մեթոդներ (պայլարիմետրիկ չափումներ, ՕՊԴ, ՅԴ):
29. Միացությունների օպտիկական մաքրության որոշման եղանակներ:
30. Նմուշներում տարրերի քանակական և որակական նույնականացման գործիքային եղանակները և սկզբունքները:

«Դեղարտադրության ստանդարտացում և GMP համակագ»

31. Դեղի ստեղծման ուղին: Օրիգինալ և գեներիկ դեղեր:
32. Դեղի որակի ապահովման կողեքսները՝ պատշաճ լաբորատոր գործունեություն (GLP- Good Laboratory Practice), պատշաճ կլինիկական գործունեություն (GCP- Good Clinical Practice), պատշաճ արտադրական գործունեություն (GMP- Good Manufacturing Practice), պատշաճ բաշխման գործունեություն (GDP- Good Distribution Practice), պատշաճ դեղատնային գործունեություն (GPP- Good pharmacy practice):
33. Դեղագրքեր: Ընդհանուր, մասնավոր և ժամանակավոր դեղագրքային հոդվածներ:
34. Արտադրողի չափորոշիչ տեխնիկական փաստաթղթեր:
35. Անալիտիկ մեթոդի վալիդացիա:
36. Պինդ դեղաձևերի որակի հսկման ցուցանիշների գնահատման մեթոդները:
37. Հեղուկ դեղաձևերի որակի հսկման ցուցանիշների գնահատման մեթոդները:
38. Փափուկ դեղաձևերի որակի հսկման ցուցանիշների գնահատման մեթոդները:

«Բնական միացությունների քիմիա» և «Կենսատեխնոլոգիա»

39. Ամինաթթուներ, կառուցվածքը, անվանակարգությունն, ու ֆիզիկաքիմիական հատկությունները, ստերեոքիմիան:
40. Ամինաթթուների անալիզի մեթոդները (ՆՇՔ, ԳՀՔ, ԲԱՀՔ):
41. Պեպտիդներ, պեպտիդային կապ: Պեպտիդային կապի առաջացման ռազմավարությունը:
42. Սպիտակուցի տարածական կառուցվածքը (I, II, III): առաջնային կառուցվածքի որոշման էտապները:
43. Ֆերմենտների դասակարգումը, կառուցվածքը և ակտիվության արտահայտման միավորները:
44. Ֆերմենտների ակտիվ կենտրոնի կառուցվածք (Դիքսոնի մոդելը), դենատուրացիա:

45. Ֆերմենտային ռեակցիայի արագության կախվածությունը ջերմաստիճանից, և միջավայրի pH-ից:
46. ԴՆԹ-ի կառուցվածքը:
47. ՌՆԹ-ի երկրորդային կառուցվածք (հիպոքրոմային էֆեկտ):
48. Կենսատեխնոլոգիական արտադրության առանձնահատկությունները և պահանջները:

«Դեղերի արտադրական տեխնոլոգիա»

49. Փոշիներ, պատրաստման առանձնահատկությունները:
50. Իրական ջրային լուծույթների պատրաստման տեխնոլոգիան (բացատրել դեղատոմսի օրինակով՝ միանվագ և օրական դեղաչափի հաշվարկ, առանձնահատկությունները):
51. Կախույթների պատրաստում խիստ հիդրոֆոբ նյութերով (բացատրել դեղատոմսի օրինակով՝ միանվագ և օրական դեղաչափի հաշվարկ, առանձնահատկությունները):
52. ԲՄՄ լուծույթներ, պատրաստման առանձնահատկությունները (բացատրել դեղատոմսի օրինակով):
53. Ջրաթուրմեր, պատրաստման դեղատնային տեխնոլոգիան (բացատրել դեղատոմսի օրնակով դեղաչափերի հաշվարկ, Կ₂ և այլ առանձնահատկություններ):
54. Քսուքներ, պատրաստման դեղատնային տեխնոլոգիան (ըստ դեղատոմսի, առանձնահատկությունները, պատրաստման տեխնոլոգիան):
55. Դեղամոմիկի պատրաստման տեխնոլոգիան (դեղաչափերի հաշվարկ, հիմքի քանակի հաշվարկ, առանձնահատկությունները):
56. Գալենային դեղապատրաստուկներ, ստացման տեսական հիմունքները, տեխնոլոգիական առանձնահատկությունները:
57. Նորգալենային դեղապատրաստուկներ: Հանուկների մաքրման մեթոդները, ստանդարտավորման եղանակները:
58. Դեղահատեր, դասակարգումն ու դեղահատավորման տեսական հիմունքները: Դեղահատավորման օժանդակ նյութեր և լցանյութեր:
59. Դրածե, միկրոդրածե, սպանսուլա. արտադրության եղանակները, տեխնոլոգիական առանձնահատկությունները:
60. Ներարկման դեղաձևերի արդյունաբերական արտադրությունը, որակի հսկումը:

«Դեղաբանություն»

61. Խոլիներգիկ սինապսների վրա ազդող դեղերի դեղաբանական բնութագիրը, խոլինոմիմետիկներ և խոլինոպաշարիչներ:
62. Ադրեներգիկ սինապսների վրա ազդող դեղերի դեղաբանական բնութագիրը, ադրենոմիմետիկներ և ադրենոպաշարիչներ:

63. Տեղային անզգայացնող դեղերի դեղաբանական բնութագիրը:
64. Ափիոնային, թմրաբեր ցավազրկող դեղերի դեղաբանական բնութագիրը:
65. Ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղերի դեղաբանական բնութագիրը:
66. Հակազերճնշումային դեղերի դեղաբանական բնութագիրը:
67. Հակաանգինալ (հակահեղձուկային) դեղերի դեղաբանական բնութագիրը:
68. Միզամուղ դեղերի դեղաբանական բնութագիրը:
69. Պենիցիլինի և ցեֆալոսպորինների շարքի հակաբիոտիկների դեղաբանական բնութագիրը:
70. Ամինոգլիկոզիդային, տետրացիկլինի, մակրոլիդային, լևոմիցետինի շարքի հակաբիոտիկների դեղաբանական բնութագիրը:

«Դեղագործության կազմակերպում և էկոնոմիկա»

71. Դեղագործական համակարգ, դրա կառուցվածքը:
72. Հանրային դեղատուն, դրա հիմնական խնդիրն ու գործառույթները:
73. Դեղագետի դերը ինքնաբուժման կառավարման գործընթացում:
74. Դեղագործական գործունեություն: Գործունեություններ, որոնք իրականացվում են միայն դեղագետների և դեղագործների կողմից:
75. Դեղի՝ որպես յուրահատուկ սպառողական ապրանքի առանձնահատկությունները:
76. Դեղերի անվանումները:

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն՝



Ա.Ս. Սաղյան